

ՀՈՎՀԱՆ ՕԶՆԵՑՈՒ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

7-րդ դարից սկսած, Հայաստանում արաբական գերիշխանության շրջանում, երբ կազմալուծված էին հայոց ռազմական ուժերը, մեր ազգային ինքնուրույնությունը, հավատն ու լեզուն՝ վտանգված, գոյաբանական խնդիրների շուրջ համախըմբվում են ազգային հոգևոր ուժերը, որոնք իրենց գրչով ծավալում են ազգապաշտպան գործունեություն՝ ստեղծելով թե՛ պատմագիտական, թե՛ աստվածաբանական հարուստ գրականություն:

Այդ շրջանում են ստեղծագործել Սեբեոսը, Ղևոնդ Վարդապետը, Հովհ. Մամիկոնյանը, Հովհան Օձնեցին, Ստեփանոս Ասողիկը, Հովհաննես Դրասխանակերտցին և ուրիշներ:

Օձնեցու աշխատանք է այդ գործիչների երկերի աշխարհաբար թարգմանությունը, որի միջոցով ընթերցողները հաղորդակցվում են մրանց պատմագիտական, իմացաբանական, աստվածաբանական հայացքներին, հայ ժողովրդի պատմական անցյալին, ինչպես նաև մրանց ստեղծագործությունների լեզվին ու ոճին:

Վերջերս «Ամահիտ» հրատարակչությունը «Հայոց մատենագիրներ» մատենաշարով լույս ընծայեց 8-րդ դարի հեղինակ Հովհան իմաստասեր Օձնեցու «Երկերը», որ գրաբարից աշխարհաբար է թարգմանել բանասիրության դոկտոր, պրոֆ. Վազգեն Համբարձումյանը՝ առաջաբանով, ընդարձակ ծանոթագրություններով ու բանասիրական մեկնաբանություններով:

Հովհան Օձնեցին հայ հոգևոր-մշակութային աշխարհի բացառիկ դեմքերից է: Հայտնի է, որ 717-728 թթ. մա եղել է Հայ Առաքելական Եկեղեցու հովվապետը: Հոգևոր առաջնորդի իր հայրենամկեր գործունեությունը մա զուգորդել է մտավոր ստեղծագործական աշխատանքի հետ՝ սերունդներին ավանդելով իմաստասիրական և եկեղեցական հարուստ ժառանգություն, որը հայ աստվածաբանական-դավանաբանական գրականության մեջ աչքի է ընկնում իր ճշգրիտ հարցադրումներով ու դրանք մեկնաբանելու գիտական խորությամբ:

Հովհան Օձնեցին իր աստվածաբանական-իմաստասիրական երկերը գրել է տարբեր շարժառիթներով: Էականը, սակայն, 8-րդ դարի դավանաբանական պայքարն է՝ ուղղված կրոնական գաղափարախոսության մեջ ի հայտ եկած ալլազան (աղանդավորական) հոսանքների դեմ՝ քրիստոնեական վարդապետությունը մաքուր ու անաղարտ պահելու մտահոգությամբ:

* Հովհան Օձնեցի, Երկեր: Թարգմանությունը, առաջարկը և ծանոթագրությունները Վազգեն Համբարձումյանի: Երևան, «Անահիտ» հրատարակչություն, 1999, 310 էջ:

Հովհան Օձնեցու աշխատությունները թեմատիկորեն բաժանվում են մի քանի խմբի. ըստ այդմ՝ մի կողմից առանձնանում է «Ատենաբանությունը», մյուս կողմից՝ «Ընդդեմ պավիկյանների» և «Ընդդեմ երևութականների» գործերը: Մի կողմից գրում է Եկեղեցու կանոնակարգին վերաբերող երկեր («Քրիստոսի Եկեղեցու կարգերի մասին», «Եկեղեցու կարգերի մասին»), մյուս կողմից՝ տրակտատներ՝ նվիրված Եկեղեցու հայրերի՝ Հայաստանում գումարած կրոնական ժողովների («Հայաստանում տեղի ունեցած ժողովների մասին») և Քրիստոսի մարմնամալու դավանությամբ («Քրիստոս Բանի մարմնամալու ամսատան հուլիսի դավանությունը»): Ի վերա այսր ամենայնի, նա շարադրել է ծիսական բնույթի գրվածքներ, հորինել շարականներ:

Ահա հայ մշակույթի այս երախտավորի գրական ժառանգությանն է մեզ հաղորդակից դարձնում անվանի գրաբարագետ Վ. Համբարձումյանը՝ Հովհան Օձնեցու երկերի աշխարհաբար թարգմանությամբ:

Նա քաջ գիտակցել է այն խոչընդոտները, որոնք ծառացած են եղել մատյանի՝ գրաբար-աշխարհաբար փոխադրության ընթացքում. դրանք պայմանավորված են 8-րդ դարի հայերենի առանձնահատկություններով ու հեղինակային լեզվի յուրահատկություններով, մանավանդ որ «հեղինակի փիլիսոփայական լեզուն առհասարակ ենթադրում է ոչ միայն գիտական սովյալ համակարգի և հայ աստվածաբանական գրականության լավ իմացություն, այլև այդ շրջանի գրաբարի բառապաշարի, քերականական կառուցվածքի և լեզվական ոճերի հստակ պատկերացում» (էջ 8):

Առաջին իսկ ծանոթությունը մատյանի թարգմանությամբ մեզ բերում է այն հանդման, որ նրա հեղինակը լավագույնս լուծել է իր առաջադի խնդիրը:

Վ. Համբարձումյանը նոր անուն չէ գրաբարի հետազոտության ասպարեզում. հիշենք, որ նրա առաջին գիտահետազոտական աշխատանքը նվիրված էր 8-րդ դարի հեղինակ Հովհան Մամիկոնյանի «Տարոմի պատմության» լեզվաոճական քննությամբ, իսկ դոկտորական թեզը վերաբերում էր գրաբարի զարգացման պատմությանը՝ ընդհուպ 19-րդ դար: Այնպես որ Հովհան Օձնեցու մատյանի թարգմանությունը ձեռնարկելուց առաջ նա վաղուց ուներ գրաբարի թե՛ համաժամանակյա, թե՛ տարժամանակյա կտրվածքների խոր իմացություն, որ հնարավորություն է տվել նրան բարեհաջող կերպով ավարտելու ստանձնած գործը:

Սա մենք հատկապես ընդգծում ենք, քանի որ Վ. Համբարձումյանի կատարած թարգմանությունը շահել է մի քանի առումով:

Պրոֆ. Վ. Համբարձումյանի կատարած աշխատանքը կարևորվում է ամենից առաջ իր բանասիրական-ճանաչողական դերով:

Հովհան Օձնեցու գրական ժառանգությունը հայ դավանաբանական-աստվածաբանական գրականության անբաժան մասն է կազմում. այս թարգմանության շնորհիվ Հովհան Օձնեցին դադարում է միայն գրաբարագետներին հասու լինելուց՝ դառնալով ընթերցող լայն հասարակականության սեփականությունը: Այդպիսով ընթերցողները և մեր հավատացյալ ժողովուրդը հաղորդակցվում են 8-րդ դարի հայ

հոգևոր առաջնորդի երկերին, իրազեկ դառնում նրա իմացաբանական-աստվածաբանական հայացքների ճշմարտացիությանը, մեծ մտածողի լեզվական ըմբռնումներին, տեղեկանում այն հավատապաշտպան գործունեությանը, որ ծավալել է Հովհան Օձնեցին՝ պայքարելով դավանաբանական աղանդների դեմ, Քրիստոսի վարդապետության ջահն ամսար պահելու անսասան հավատով: Այս աշխատանքից տեղեկանում ենք, որ Հովհան Օձնեցին ձեռնարկել է Հայ Եկեղեցու կանոնակարգման աշխատանքներին, մշակել ծիսական արարողակարգը և այլն: 726 թ. նա Մանագլեքտում հրավիրել է եկեղեցական հատուկ ժողով՝ վերջ դնելու այլախոհությանն ու հաստատելու հոգևոր միասնականություն: Տեղեկանում ենք, որ իր թե՛ տեսական-բեմասացական ճառերով և թե՛ գործնական քայլերով Հովհան Օձնեցին մեծ նպաստ է բերել Հայ Առաքելական Եկեղեցու հիմքերի ամրապնդմանը, Եկեղեցու շուրջ ժողովրդի համախմբմանը, հայոց մեջ հավատքի անկախացմանը:

Թարգմանության իմաստասիրական բաժնում տեսանելի են դառնում Հովհան Օձնեցու փիլիսոփայական ու լեզվաբանական հայացքները. «Նա իմացաբանության և գոյաբանության հարցերում հետևում էր Արիստոտելի հայացքներին: Գոյի մեկնաբանման խնդիրներում Հովհան Օձնեցին ճիշտ է համարում գաղափարի՝ դեպի իրն ընթացող իմացության ճանապարհը» (էջ 12): Ծոշափելով անտիկ հունահռոմեական փիլիսոփայության մեջ արծարծված բառի և իրի (անվան և էության) հարաբերակցության հարցերը՝ նա նկատում է, որ բառը (հասկացությունը) պայմանականորեն է կապվում իրի (առարկայի) հետ, այսինքն՝ անվան և էության կապը պայմանական է. անունը բխում է առարկայի ոչ թե էությունից, այլ այն տրված է սովորույթի ուժով և այլն:

Հովհան Օձնեցու «Երկերի» թարգմանությունը միաժամանակ ունի լեզվաբանական արժեք. այն որոշակի գաղափար է տալիս 8-րդ դարի հայերենի լեզվական համակարգի առանձնահատկությունների վերաբերյալ:

Պրոֆ. Վ. Համբարձումյանը խորապես ըմբռնել է Հովհան Օձնեցու բառապաշարի իմացաբանական հասկացությունների էությունը և ըստ այդմ ճիշտ թարգմանել բազմաթիվ տերմիններ ու գիտական անվանումներ, առանց որի կարող էին խաթարվել հեղինակի ըմբռնումները:

Այսպես. Հովհան Օձնեցու գործածած դէմ (էջ 77) տերմինը նա իրավամբ թարգմանել է անձ բառով՝ ի հակադրություն անձն (77) բառի, որ նրա համակարգում նշանակում է հոգի՝ պայմանավորված դրանց իմացաբանական նշանակությամբ: Ըստ այդմ էլ նա ճիշտ է թարգմանել իմացաբանական նույն հիմքով պայմանավորված հետևյալ բառերը՝ անձնանալ - «հոգի առնել, գոյավորվել» (81), անձնաւոր - «հոգի ունեցող» (81), անձնաւորական - «գոյացական» (97), միանձնականութիւն - «միասնական հոգի» (77) և այլն:

Եթե Վ. Համբարձումյանը հաշվի առներ Հովհան Օձնեցու բառապաշարի միայն դասական շրջանի իմաստները, կարծում ենք, թարգմանությունը չէր շահի:

Մինչդեռ նա նկատի է ունեցել բառիմաստի պատմական զարգացման իրողությունը և Հովհանն Օձնեցու բառապաշարի իմաստային կառուցվածքում գտել բառական այն մոր իմաստները, որոնք ընդունվում են ժամանակի մոր ըմբռնումներից: Հմտ. երկնել - «խորհել» (85), անգլո - «ունայն, դատարկ» (77), շարադրություն - «խոսք» (80), հոգևորություն - «բանական հոգի առնելը» (95), առասպելական - «աղճատված» (104), ապականություն - «անցում գոյությունից չգոյության» (104)...

Թարգմանիչն ըստ ամենայնի հաշվի է առել Հովհանն Օձնեցու լեզվին հատուկ ձևարանական-շարահյուսական որոշ իրողություններ, որոնք պայմանավորված են ժամանակի լեզվի առանձնահատկություններով:

Հովհանն Օձնեցու լեզուն հետդասական շրջանի հայերենն է, այսպես կոչված՝ լեզվի նախամիջին ենթաշրջանը, որ մի կողմից շարունակում էր պահպանել հունարան դպրոցի ավանդույթները, մյուս կողմից՝ ենթարկվում ժամանակի գերտեքության լեզվի՝ արաբերենի ազդեցությանը:

Հովհանն Օձնեցու լեզվում ակնհայտ են հատկապես հունարենին հատուկ ոճեր ու արտահայտություններ, լեզվական զանազան կառույցներ, որոնք եթե սովորական էին հեղինակի համար, ապա, համեմայնդեպս, որոշակի դժվարություն կարող էին ներկայացնել թարգմանչի համար:

Ի պատիվ թարգմանչի պետք է ասել, որ նա հաղթահարել է այս մարզի դժվարությունները՝ ելնելով լեզվաբանական իր ընդհանուր պատրաստականությունից:

Հովհանն Օձնեցու լեզվում հանդիպում են հունարան դպրոցի հետևողությամբ ստեղծված բազմաթիվ կառույցներ, որոնք թեև մոռություն չեն ճորդ դարձել, այնուամենայնիվ պահանջում են լեզվական իրողությունների ու ոճերի մտքի զգացողություն՝ թարգմանությունը հարթ կատարելու համար:

Ի մասնավորի դրանք վերաբերում են թեք հոլովներով ենթակայի արտահայտության դեպքերին, անորոշ դերբայով և տրական ու հայցական հոլովներով կառույցներին, վերացականը թանձրացականի փոխարեն կիրառելու ոճական հնարներին և այլն¹: Հմտ. թեք հոլովներով ենթակայի թարգմանության դեպքերը.

Յոյժ տենչալի էր ինձ և փափագելի ոչ այլոց զիս և ոչ զայլս ինձ լինել ի թշնամութեան (61) - (ես) Օստ էի ուզում և փափագում, որ ուրիշներն ինձ և ես ուրիշների հետ թշնամության մեջ չլինեն:

Հմտ. անորոշ դերբայը տրականի կամ հայցականի հետ կառույցները.

Ջքնական լինել ի մարմնի զպատահումս թողացոյց (89) - Թույլ տվեց, որ բնական կիրքը լինի մարմնում: Ըղձալի լինել ինձ - ես շատ եմ ուզում (23), կարել ասել ինձ - ես կարող էի ասել (22) և այլն:

¹ Վ. Համբարձումյանն այն կարծիքն է հայտնում, որ «այդ երևույթը հայերենում զայիս է հնդեվրոպական ընդհանրությունից, իսկ հնկազայում երկրորդաբար կրել է հունարենի նմանօրինակ ազդեցությունը» (Լժ 17):

Հովհան Օձնեցու լեզվում չափազանց շատ է հանդիպում, այսպես կոչված, վերացականը թանձրացականի փոխարեն գործածվող ոճական հնարը, որի ճիշտ թարգմանությունը հեղինակի ոճին հաղորդում է ինքնատիպություն:

Հմտ. պատկեր առաքինության - առաքինի պատկեր (21), դամպար բարեփառության - ուղղափառ լամբար (88), բռնադատություն դժոխականության - դժկամ բռնադատում (23) և այլն:

Գրաբարին բնորոշ լեզվական այսօրինակ կառույցների հմուտ թարգմանությունը գեղեցկացրել է Հովհան Օձնեցու լեզուն՝ պահպանելով նրա ոճի պատկերավորությունը:

«Երկերի» թարգմանությունն ունի ընդգծված գիտական արժեք: Գրքին կցված ընդարձակ ծանոթագրությունները հսկայական նյութ են պարունակում 8-րդ դարի հայերենի լեզվական կառուցվածքի վերաբերյալ: Ուզում ենք գոհունակությամբ ընդգծել թարգմանչի տքնաջան աշխատանքը՝ Հովհան Օձնեցու մորակազմությունների (մորաբանությունների) բացահայտման ուղղությամբ:

Պրոֆ. Վ. Համբարձումյանը Հովհան Օձնեցու ստեղծագործության բառային կազմը հանգամանորեն համեմատել է գրաբարալեզու հեղինակների մատյանների համաբարբառների և ՆՀԲ-ի («Նոր Հայկազյան բառարան») տվյալների հետ և ցույց տվել հեղինակային այն մորակազմությունները (մորաբանությունները), որոնք 8-րդ դարի մակարդակում դիտվում են իբրև մորախայտ բառեր: Դրանք արտահայտում են ամենատարբեր հասկացական իմաստներ և, ինչպես եզրակացնում է Վ. Համբարձումյանը, «խիստ արժեքավոր են գիտաճյուղային տերմինաբանության և առհասարակ հայոց լեզվի պատմության առումով» (15): Այսպես միայն «Ատենաբանություն» երկում հանդիպում են շուրջ 50 մորակազմություններ (մորաբանություններ), ինչպես՝ պատգամատար, անհամաբերելագոյն, եռանձնական, բազմաշախիղ, դեռահասակ, աղօտաճաճանչ, անշարժափմն, բազմերախտ, օգտամատույց, հրափրական, անսին, թագառու, թագընկեց, օրենսազանցություն, անմերկանալի, գթասիրել, միալուծ, կենսառաք, ահեկակողմն, ծոմական, երեկանիրհասեր, զուգաքանակ, փրկանաւորել, ցանկասիրել և այլն:

Թարգմանիչը բարեխղճորեն ցույց է տվել Հովհան Օձնեցու երկում հանդիպող այն բառերը, որոնք վկայված չեն ՆՀԲ-ում, ինչպես՝ դամպարունակ, ոտանաւորութիւն, բաբելոնական, ներքսանկութիւն, բիրաբաշխ, քրիստոսաւետեալք, ապականաբնակ, ընթերցարան և այլն:

Հովհան Օձնեցու բառային մորակազմությունները (մորաբանությունները), որոնք պրոֆ. Վ. Համբարձումյանի ջանքերով ի մի են բերված, գիտահետազոտական աշխատանքի համար պատրաստի նյութ են՝ 8-րդ դարի հայերենի բառակազմական կաղապարները բացահայտելու առումով:

Ըստ ամենայնի հաջողված այս թարգմանության մեջ հազվադեպ պատահում են գրաբարյան կառույցների ոչ ճիշտ մեկնաբանություններ:

Այսպես, զբնութեանցն բարբառել բան կապակցությունը դիտվել է հունարանություն՝ տրականն անորոշի հետ (272), մինչդեռ զբնութեանցն հոլովաձևը պատմական բացառական է՝ «բնության մասին» վերաբերյալ՝ իմաստով: Բնութիւն աստուածութեան վերացականը թանձրացականի փոխարեն ոճական հնարը թարգմանվել է Աստծու բնություն (254), մինչդեռ նման կապակցություններն ունեն որոշիչ-որոշյալի շարահյուսական հարաբերություն, ուստի այն պետք է թարգմանվել «աստվածային բնություն» էություն՝ ձևով: Ոչ զԱստուած ասեն խաչեալ կառույցը նույնպես դիտվել է հունարանություն՝ հայցականն անորոշի հետ (310), մինչդեռ հայցականն այստեղ անցյալ դերբայի հետ է գործածվել:

Հազվադեպ համդիպող սեռականով հավելադրություն ոճական հնարները ծանոթագրությունների բաժնում չեն բացատրվել, ինչպես՝ Սիմոնդոս ժողովոյն (239) և այլն:

Պրոֆ. Վ. Համբարձումյանը շնորհակալ աշխատանք է կատարել՝ ընթերցող հասարակայնությանը ներկայացնելով 8-րդ դարի հայ մշակույթի նշանավոր դեմքերից մեկի՝ Հովհան Իմաստասեր Օձնեցու գրական ժառանգությունը, որ հայ իմաստասիրական և աստվածաբանական գրականության անկապտելի մասն է կազմում:

Այս թարգմանությամբ փոքրի ի շատե լրացվում է այն բացը, որ տիրում էր հին հայերենի, մասնավորապես 8-րդ դարի մատենագիտական արժեքներին հաղորդակցվելու ճանապարհին:

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

